

Աթեիստ պրոֆետորի և մուսուլման Ուսանողի միջև երկխոսությունը

[Հայերեն - Armenian - أرمني]

Թարգմանություն:

EUROPEAN ISLAMIC RESEARCHES CENTER (EIRC)

& Հմայակ Նալբանդյան (Hmayak Nalbandyan)

Ստուգում

Ախմեդ Հայկական

2012 - 1433

IslamHouse.com

﴿ حوار بين طالب مسلم وبروفيسور ملحد ﴾
« باللغة الأرمينية »

ترجمة: المركز الأوروبي للدراسات الإسلامية & إيمايك نالبانديان
مراجعة: أحمد الأرميني

2012 - 1433

IslamHouse.com

Այս գրքի թարգմանությունը՝ «Ո՞վ է կապիկը իրականում» հաստատում է մուսուլման մարդու ծագման տեսակետի ճշմարտության իսկությունը: Գիրքը կարելուր և անհրաժեշտ գործիք է բոլոր ուսանողների համար, ինչպես նաև նրանց համար՝ ովքեր ցանկանում են իմանալ մարդկային ծագման մասին իսլամական հայեցակարգը:

Գրվածը կատարվում է ուսումնական հաստատությունում:

«Թույլ տվեք բացատրել գիտության և աստծո միջև հարաբերությունները...»: Փիլիսոփայության արեփստ պրոֆեսորը դասարանի առջև փոքրիկ ընդմիջում անելուց հետո խնդրում է նորեկ ուսանողներից մեկին, որ ոտքի կանգնի:

«Դու մուսուլման ես: Այդպե՞ս չէ. Տղա ջան:

«Այո սեր»:

«Եւ այսպես, հավատում ես աստծուն»:

«Լիովին»:

«Իսկ աստված բա՞րի է»:

«Իհարկե բարի է»:

«Աստված ամենակարո՞ղ է: Կարո՞ղ է ինչ որ բան անել»:

«Այո»:

Պրոֆեսորը ժպտում ու միտումնավոր սպասում է մի ակնթարթ:

«Ուրեմն այսպես...Ենթադրենք այստեղ կա մի հիվանդ և դուք կարող եք բուժել նրան:

Դուք կանե՞ք ի՞նչ դա, նրան օգնելու համար»:

«Այո սեր»:

«Ուրեմն դուք էլ եք բարի...»

«Ես չասացի, որ...»

«Ինչու՞ չեիք ասի, որ: Դուք կարող էիք օգնել հիվանդ ու հաշմանդամ մարդկանց, եթե ունենաիք նման հնարավորություն... իրականում մեզանից շատերը կանեին դա, եթե կարողանային:... Իսկ աստված, ոչ»:

(Առանց պատասխան) Նա լռում է:

Տարիքավոր դասավանդողը խոսում է ըմբռնումով.«Ոչ, դուք չեք կարող: Այդպես չէ՞»:

Պրոֆեսորը խմում է սեղանի վրա դրված ջրից, որպեսզի ուսանողները մի փոքր ընդմիջեն: Չարժե նոր լսողներին ծանրաբեռնել փիլիսոփայությամբ:

«Եկեք նորից սկսենք, երիտասարդ: Հետևաբար աստված բարի է»:

«Է...Այո»:

«Իսկ սատանան նու՞յնպես բարի է»:

«Ոչ»:

«Ինչպե՞ս է եկել սատանան»:

Ուսանողը դանդաղում է պատասխանել: «Աստծուց...»

«Դա ճիշտ է: Աստված ստեղծեց նաև սատանային, այդպե՞ս չէ»:

Տարիքավոր պրոֆեսորը ձեռքով շոյում է նոսրազած մազերով ծածկված իր գլուխը և դիմում մտածմունքների մեջ կորած ուսանողներին:

«Տիկնայք և պարոնայք, կարծում եմ այս կիսամյակի ընթացքում շատ զվարճալի կլինի»:

Նա կրկին վերադառնում է մուսուլմանին: «Ասա ինձ տղա ջան:
Կա՞ չարիք այս աշխարհում»:

«Այո, սեր»:

«Չարիքն ամենուր չէ՞: Եւ աստված է ստեղծել այդ ամենը»:

«Այո»:

«Ո՞վ է ստեղծել չարիքը»:

(Առանց պատասխան)

«Այս աշխարհում կա հիվանդություն ու ստելություն,
անբարոյականություն և տգեղություն: Այդ բոլորը սարսափելի
բաներ են: Դրանք առկա՞ են այս աշխարհում»:

Ուսանողը հենվում է մյուս ոտքին և պատասխանում «այո»:

«Ո՞վ է ստեղծել դրանք»:

(Առանց պատասխան)

Պրոֆեսորը անսպասելիորեն բարձրացնում է ձայնը:

«Ո՞վ է ստեղծել դրանք: Ասե՛ք ինձ խնդրեմ»: Այնուհետև նայելով
մուսուլմանի դեմքին շարունակում է հանգիստ, կարծես
ժպտացող ձայնով. «Աստված է ստեղծել բոլոր չարիքները:
Այդպես չէ՞ տղա ջան»:

(Առանց պատասխան)

Ուսանողը փորձում է դիմակայել փորձառու դասախոսի
հայացքին, սակայն չի հաջողվում: Դրանից հետո դասախոսը
սկսում է քայլել դասարանի դիմաց հին պանտերայի վստահ
քայլերով: Լսարանը ենթարկվում է գիպնոզի:

«Ասա ինձ...» շարունակում է դասախոսը. «Ինչպե՞ս ստացվեց, որ աստված բարի է, եթե նա է ստեղծել ամբողջ չարիքը՝ որը գերիշխել և գերիշխում է»:

Պրոֆեսորը տարածում է ձեռքերը փորձելով ցույց տալ ամբողջ աշխարհի չարիքի ծանրությունը:

«Ամբողջ ասելությունը, դաժանության ցավը, բոլոր տանջանքները, անիմաստ մահերի շարքերը, սոցիալությունները, բոլոր տառապանքները այս աշխարհի: Այս ամենը այդ բարի աստծո կողմից է ստեղծված: Այդպես չէ՞ երիտասարդ»:

(Առանց պատասխան)

«Չե՞ս տեսնում, որ ամենուրեք է» Պրոֆեսորը փոքր ինչ լռելուց հետո. «Այդպես չէ՞»:

Այնուհետև մոտիկից շշնջում է ուսանողի երեսին. «Սրանից հետո աստված բարի է»:

(Առանց պատասխան)

«Հավատո՞ւմ ես աստծուն, տղա ջան»:

Ուսանողը մրթմրթում է դավաճանական դողդողացող ձայնով. «Այո, պրոֆեսոր, հավատում եմ»:

Տարիքավորը գլուխը այս ու այն կողմ է անում:

«Գիտությունը ասում է, որ մենք ունենք հինգ զգայարան և օգտագործում ենք դրանք արտաքին աշխարհն ընկալելու համար: Դուք երբեք չեք տեսել աստծուն, չէ՞»:

«Ոչ սեր, ես երբեք չեմ տեսել նրան»:

«Այդ ժամանակ կարո՞ղ եք ասել, որ երբևէ լսել եք աստծուն»:

«Ոչ, սեր, չի պատահել»:

«Կարո՞ղ է երբևէ զգացել եք ձեր աստծուն կամ զգացել նրա համր: Իրականում ունե՞ք աստծուն զգալու որևէ զգայարան»:

(Առանց պատասխան)

«Պատասխանի՛ր ինձ խնդրեմ»:

«Ոչ սեր, վախում եմ, որ չունեմ»:

«Դուք վախում եք... Դուք չունե՞ք»:

«Ոչ, սեր»:

«Եւ չնայած այս ամենին դուք կրկին հավատու՞մ եք»:

«Այո...»

«Այո, դա պահանջում է հավատք»:

Պրոֆեսորը իմաստունորեն ժպտում է ուսանողին:

«Համաձայն ապացուցված կանոնների ակնհայտ է, որ ձեր աստվածը գոյություն չունի: Ի՞նչ կարող ես դրան ասել, տղա ջան: Ո՞րտեղ է քո աստվածը հիմա»:

«Ուսանողը չի պատասխանում»

«Նստիր խնդրեմ»:

Մուսուլմանը նստում է պրոֆեսորի ակնհայտ հաղթանակի ներքո: Սակայն օգնությունը ավլահի ձեռքում է և հաղթանակը անխուսափելի:

Մեկ այլ ուսանող, որ կարելի է անմիջապես նկատել նրա մահմեդական լինելը՝ հագնվածքից և մորուքից անսպասելիորեն ձեռք է բարձրացնում:

«Պրոֆե՛սոր, կարո՞ղ եմ դիմել դասարանին»:

Պրոֆեսորը շրջվում է և ժպտում, ասելով. «Օ՛, ես ևս մի մուսուլման եմ տեսնում: Կարծես ֆունդամենտալիստների ավանգարդ լինի: Խնդրեմ երիտասարդ, ասում են, թե որոշները կարողանում են»:

մուսուլման ուսանողը անտեսում է պրոֆեսորի հեզնական տոնը: Սպասելով ուսանողների ուշադրությանը, նայում է շուրջբոլորը և անմիջապես հետո դիմում պրոֆեսորին:

«Մեր, որոշ հետաքրքիր հատվածներ ունեիք: Ձեռք ըստ թույլտվությամբ, սեր, կուզեի պատասխանել բոլոր հարցերին առանձնացված: Հետևյալ հարցերը պետք է լուծվեն տրամաբանորեն և գիտականորեն, ոչ թե էմոցիոնալ մոտեցմամբ: Առաջին հատվածի մեջ է ձեր հիմնական վարդապետությունը՝ աստծո գոյուն չունենալը: Այդ իսկ պատճառով տիեզերքը գոյացել է ըստ մեծ պայթման տեսության և այն, որ մարդը առաջացել է էվոլյուցիայի որոք: Արդյո՞ք դա ձեր կարծիքը չէ, պրոֆեսոր»:

«Այո որդիս, ինքնաբերաբար: Ի՞նչ ես ուզում ասել»:

«Եկեք չշտապենք: Եկեք օգտագործենք տրամաբանությունը, իսկըր և թեմային վերաբերվող գիտական ապացույցները... Նախապես ուզում եմ ընդգծել, որ օգտագործում եմ «վարդապետություն» բառը միտումնավոր՝ սուտ գիտություններ դասավանդողների համար, որ ընդունում են աթեիզմը որպես կրոն: Ես մի հարց ունեմ ձեզ, պրոֆեսոր: Աշխարհում ստեղծվել են միլիոնավոր ռումբեր և զինամթերքներ, իսկ ռումբ պայթեցնելու համար հարկավոր է պայթյուն առաջացնող մեխանիզմ... Առաջին հերթին ճիշտ բաղադրիչները, ճիշտ համակցությունները և համապատասխան միջավայրը: Երկրորդ հերթին պահանջվում է մարդ, որ անի այդ ամենը»:

«Իհարկե, ոչ: Ի՞նչ ի նկատի ունեք»:

Այն որ ցանկանում էք մեզ հավատացնել, որ մեծ պայթյունը եղավ ինքն իրեն և ոչ ոք ձգան չի սեղմել: Բացատրեք մեզ խնդրեմ: Ինչպե՞ս աշխարհում ոչինչ չի կատարվում առանց որևէ արտաքին ազդեցության: Ցանկացած գիտական ապացույց պետք է լինի նրա համար, որ լինի ընդունելի»:

Պրոֆեսորը բացում է բերանը, սակայն ոչինչ չի ասում:

«Բացի այդ մենք գիտենք, որ գիտական տեսակետից անհնարին է, որ ինքնաստեղծման հարց լինի: Վերցնենք մի փայտե սեղան: Այն ինքն իրենով գոյություն չունի: Այն պետք է ստեղծեին որոշ արտաքին գործոններ: Նույնիսկ ծառը գոյություն չունի ինքն իրենով: Այն ելնում է սերմից, որն էլ տնկված էր: Ինչու՞ ձեր գիտնականները չեն կարող վերարտադրել մեծ պայթյունը լաբարատորիայում: Պրոֆեսոր, դուք պետք է տեղյակ լինեք, որ ցանկացած գիտական մասնիկ պետք է լինի վերարտադրվող, որպեսզի մենք կարողանանք վստահել նրան»:

«Տղաս, դա միամտություն է մտածել, որ մենք հիմա կարող ենք այդպիսի բաներ անել: Մեծ պայթյունից թողարկված էներգիան մեզ հասանելի չէ, այլապես մենք նույնպես կվերարտադրեինք այդ երևույթը»:

«Պրոֆեսոր, մեզ չասացիք, թե ով է ներկայացրել հիմնական բաղադրիչները և եթե չեք կարող ասել մեզ, թե ով է սեղմել կոճակը, քաշել ձգանը կամ վառել լուցկին պայթյունը իրագործելու համար, ապա ո՞րտեղից է ծագել այդ ձեր ասած հսկայական էներգիան: Դե, պրոֆեսոր: Ի՞նչ է ասում գիտությունը այդ մասին: Այո, պրոֆեսոր, պետք է ունենալ մեծ հավատ այդ սուտ գիտության քահանաների մեծ պայթման վարդապետությանը: Եւ դուք էլ ակնկալում եք, որ մենք պատրաստ ենք հրաժարվել գիտական սկզբունքներից, որպեսզի

կուրորեն հավատանք ողջ այդ աճպարարությանը որպես վերջնական գիտություն»:

(Պատասխան չկա)

« Եթե դեմ չեք, պրոֆեսոր: Էվոլյուցիայի վարդապետությանը հայտարարված է սուտ գիտության ինչ որ լուսավորիչների կողմից: Դուք գիտեք, որ ընթանում է պակասող քարացած մասնիկի փնտրտուք, որպեսզի անմիջականորեն կապվի մարդու կապիկից ծագումը»:

«Այո, բայց կան շատ ուրիշ ապացույցներ»:

«Ցավոք ստիպված եմ ձեզ ընդհատել, պրոֆեսոր: Դուք խոստովանում եք, որ չկա անմիջական կապ: Դուք պետք է խոստովանեք, որ քարացած ոչինչ գոյություն չունի, որ կլիներ կապիկից մարդ տանող ճանապարհի որոշ միջնորդ: Ես համոզված եմ, որ դուք նույնպես տեղյակ եք պիլտոդաունյան կեղծիքի մասին, պրոֆեսոր»:

«Պիլտոդաունյա՞ն ... Պիլտոդաունյա՞ն...»

«Թույլ տվեք թարմացնել ձեր հիշողությունը, պրոֆեսոր: Որոշ քարացումներ հայտնաբերվել են Անգլիայում՝ Պիլտոդաուն կոչվող տեղում: Դա այն հայտնաբերությունն է, որը որոնում էին որպես էվոլյուցիայի շղթայի պակասող մասնիկ: Այնքան յուրահատուկ դուրս եկավ, որ սուտ գիտության և աթեիզմի քահանաները շատ ուրախացան: Անբողջ աշխարհին ստիպեցին հավատալ դրան և նույնիսկ թերահավատներն էին համոզված դրանում, մինչև որ քառասուն տարի հետո պարզվեց դրա կեղծիք լինելը և որ տեղադրված է «սուրբ եղբայրության մի քահանայի» կողմից... Դա մեծ սուտ էր, մասսայական խարդախություն՝ որը հորինել էին սուտ գիտնականները փորձելով համոզել աշխարհին, որ աթեիզմի կրոնը և մարդու կապիկից արաջանալը

ճշմարտություն է : Եթե ցանկանում եք իմանալ ավելին այդ կեղծիքի մանրամասնությունների մասին, ապա կարող եք կարդալ պրոֆեսոր Տոբիասի աշխատանքը՝ հարավային Աֆրիկայից»:

Պրոֆեսորի դեմքը դառնում է սպիտակ և մոխրագույն: Սակայն մեկնաբանություններ չկան:

«Խոսելով կեղծիքների մասին, պրոֆեսոր, դուք գիտե՞ք, թե ինչ է գրագողությունը: Կարո՞ղ եք բացատրել դասարանին թե ինչ է գրագողությունը»:

Պրոֆեսորը անվստահորեն ասում է, որ գրագողություն է կոչվում ուրիշի աշխատանքը սեփականացնելը:

«Դա ճիշտ է: Շնորհակալություն, պրոֆեսոր: Եթե դժվարությամբ անեիք արդար և ազնիվ հետազոտություններ կհայտնաբերեիք, որ արևմտյան երկիրները պարզապես չեղյալացնում են մուսուլման գիտնականների բոլոր իրական, գիտական աշխատանքները, իսկ հետո կառուցում իրենց սեփականը դրանց վրա, փոխանցելով դրանք որպես իրենց սեփական, որն էլ բերեց ցիտական և տեխնիկական առաջնթացին: Ձեզ պետք չէ հավատալ իմ խոսքերին, ուղղակի գրեք «գիտական հետազոտությունների կենտրոն» Հնդկաստանում և նրանք հաճույքով կուղարկեն ձեզ տեսակետը ապացուցելու համար ամբողջ անհրաժեշտ գրականությունը»:

Այդ պահին դասարանը ուշադիր լսում է մուսուլման ուսանողին և արագորեն գրում նշվող հասցեները:

«Եկեք վերադառնանք էվոլյուցիայի վարդապետությանը՝ որին նպաստում էին սուտ գիտության քահանաները: Նրանց վարդապետության հիմքն է «բնական ընտրություն» հայցակարգը: Այնտեղ ասվում էր, որ շրջակա միջավայրի

փոփոխությանը հարմարվող տեսակները փոխանցում էին իրենց հաջորդ սերունդներին կերպարափոխություններ և ֆիզիոլոգիկ փոփոխություններ, իսկ այն տեսակները՝ որոնց դա չէր հաջողվում վերանում էին: Դասական օրինակ է ծառայում դինոզավրների պատմությանը: Նրանք շատ մեծ էին և դանդաղաշարժ, այդ պատճառով չէին կարող մրցակցել ավելի փոքր, ավելի ճկուն կենդանիների հետ՝ որոնք հեշտությամբ էին ենթարկվում էվոլյուցիոն փոփոխություններին և գոյատևում: Բացի այդ, էվոլուցիայի ընթացքում անհայտացան մեծ ու անհիմաստ պոչերը և ճանկերը՝ փոխարինվելով ավելի փոքրներով: Դուք կարող եք բաժանորդագրվել այդ վարդապետությանը, այդպես չէ՞ պրոֆեսոր»:

Խեղճ պրոֆեսորը չգիտի համաձայնվի, թե ոչ: Նա չկողմնորոշվելով շարժում է գլուխը, չիմանալով թե էլ որտեղից հարված սպասի:

«Դե, դե պրոֆեսոր: Դա փաստորեն էվոլուցիայի վարդապետության անկյունաքարն է՝ որով այդ լուսավորիչները լցրել էին դյուրահավատների ուղեղները: Եկեք հերքենք սուտ գիտությունը ճշմարիտ գիտությամբ, պրոֆեսոր: Գիտնականներից ինչ որ մեկը երբևէ ստեղծե՞լ է նոր կյանքի տեսակ իր լաբարատորիայում, միջավայրի փոփոխությամբ և վերահսկողությամբ: Հիշեք, որ գիտությունը չի կարող ընդունել այն վարդապետությունը՝ որը ապացուցված չէ»:

(Առանց պատասխան)

« Բհարկե ոչ, չնայած փորձեր արվել են: Բհարկե, հետևաբար մենք գիտենք, որ հրեաները կտրում են անում տղամարդկանց սերնդից՝ ծնվելուց հետո: Գիտենք նաև, որ դա արվում է անխախտ շղթայով Աբրահամի ժամանակաշրջանից (խաղաղություն նրա հոգուն): Արդյունքում որոշ

հիվանդությունների տեսակներ պետք է փոխվեին: Յուրաքանչյուր արական սեռի երեխա՝ որը ժառանգեր հեմոֆիլիա, արյունահոսությունից կմահանար և հիվանդությունը չէր փոխանցվի հաջորդ սերնդին: Համաձայն էք դրա հետ, պրոֆեսոր»:

Պրոֆեսորը անհամբերությամբ այս ու այն կողմ է անում մտածելով, որ դա տալիս է նրան սկիզբ:

«Ուրեմն ասեք ինձ, պրոֆեսոր: Նրանից հետո, որ հազար տարի արվում է կտրում, բոլոր արական սեռի երեխաներից, Ինչու՞ հրեաները չեն ծնվում առանց ծայրային մսի: Նույնիսկ, եթե ոչ լրիվ ծայրային միս, առնվազն որոշ ցուցումներ, որ այն պետք է պակաս լինի համաձայն բնական ընտրության տեսության: Դուք համաձայն չե՞ք, պրոֆեսոր»:

Խեղճ պրոֆեսորը ուղղակի ապշած նայում է հեռուն, չիմանալով, թե որտեղից սպասի հաջորդ հարվածը:

«Պրոֆեսոր, ունե՞ք երեխաներ»:

Փոքր ինչ հանգստություն վերցնելով նրանից, որ փոխվեց հարցի թեման, պրոֆեսորը փորձեց հավաքել նորեկների մնացած վստահությունը:

«Այո, ունեմ... ես ունեմ երկու տղա և մի աղջիկ»:

Պրոֆեսորը նույնիսկ ժպտաց, երբ հիշեց իր երեխաներին:

«Պրոֆեսոր, դուք կերակրու՞մ էիք նրանց երբ նրանք նորածիններ էին»:

Մի փոքր դժվարանալով նրանից, որ կարծեց, որ նրան տրվել է հիմար հարց ժայտքում է:

«Ինչ հիմար հարց: Իհարկե ես չեմ կերակրել նրանց. Իմ կինն է կրծքով կերակրել նրանց»:

«Պրոֆեսոր, կա՞ին աթեիստների շարքերում մարդիկ՝ ովքեր երբևէ գտել են կրծքով երեխա կերակրող տղամարդու»:

«Կրկին հիմար հարց: Միայն կանայք են կրծքով երեխա կերակրում»:

«Պրոֆեսոր, նույնիսկ առանց ձեզ հանվեցնելու վստահ եմ, որ ունեք երկու պտուկ՝ ինչպես ցանկացած այլ տղամարդ: Ինչու՞ դրանք չեն վերացել որպես ավելնորդություն: Ըստ բնական ընտրության վարդապետության այդպիսի անիմաստ առարկաները՝ ինչպիսիք են տղամարդու պտուկները պետք է անհայտանայն բոլոր տղամարդկանց մոտ հազար կամ միլիոնավոր տարիներ առաջ, պրոֆեսոր»:

Մուսուլման ուսանողը խոսում էր մեղմ, նա չէր գոռում պրոֆեսուրի վրա և ոչ էլ հրում էր նրան:

«Ես վստահ եմ, որ ըստ գիտական հստակ փաստարկների, այլ ոչ թե սուտ գիտությանը, դուք կհամաձայնվեք, որ էվոլուցիայի վարդապետությունը դա պարզապես անհեթեթություն է»:

Պրոֆեսորի դեմքի գույնը փոխվում է և այն ամենը ինչ նա կարող է անել, դա անօգնական հոգոց հանելն է: Մուսուլման ուսանողը շրջվում է դեպի դասարանը և փոքր ինչ ժպտալով դիմում է ուսանողներին:

«Փաստորեն մենք կարող ենք գնալ ավելի հեռուն և ասել յուրաքանչյուրին՝ ով հավատում է, որ նա առաջացել է կապիկից, որ ինքն էլ կապիկ է»:

Որոշ ժամանակ անց դասարանը հասկանում է մուսուլմանի խոսքերի խաղը և նրա խոսքը հաջողության է հասնում՝ ուսանողները ծիծաղում են: Երբ ուսանողները դադարում են ծիծաղել, մուսուլման ուսանողը շարունակում է: Դիմելով պրոֆեսորին ասում է:

«Կան շատ ծակեր Էվոլուցիայի դասավանդման մեջ: Ասես ցանց լինի, սակայն ժամանակը, սեղմում է: Պետք է շտապեմ մզկիթ աղոթելու, այդ պատճառով մենք չենք քննարկի այդ բոլոր առասպելները հիմա: Եկեք անցնենք ձեր դրած բարոյական թեմային, սակայն մինչ այդ էլ եկեք տեսնենք ձեր եղբոր մասին ասածին՝ որ մահացել էր քաղցկեղից: Եթե դուք զրահուրված եք նրա մահվան պարճառով, ապա դա բացարձակորեն հիմարություն է՝ քանի վոր մարդկային էակները, ինչպես նաև ամբողջ կենդանությունը բնականաբար մահանում է և դա ապացուցված փաստ է: Անկախ դրանից, հավատում ենք աստծուն թե ոչ, ոչ մեկը մեզանից չի կարող խուսափել մահը: Երկրորդ, դուք չեք կարող լինել այդքան միամիտ՝ որ ընդդիմանաք հիվանդության փաստին, լինեք դա քաղցկեղ, այլ հիվանդություն կամ դժբախտ պատահար, այսինքն՝ այն ամեն ինչը, որ կարող էր հանգեցնել մահվան: Ձեր առարկությունը պայմանավորված է մոլորությամբ, որ տառապանքներից հանգստացումը դա բարի բան է և այն, որ տարապանքներ բերող ամեն ինչը՝ դաժանություն: Եթե դա այդպես լինեք, ապա մենք այլ ընտրանք չեինք ունենա համաձայնվելուց բացի նրան՝ որ աշխարհի ամենադաժան մարդիք դա այն գիտնականներն են, որ օգտագործում են կենդանիներին իրենց բժշկական հետազոտությունների անցկացման սարսափելի փորձարկումներին: Իհարկե, դուք պե՞տք է, որ տեղյակ լինեիք հազարավոր կենդանիների մասին՝ որոնց խոշտանգել են տարբեր եղանակներով, ստիպել տառապել և կրել միլիոնավոր տանջանքներ, որպեսզի ապացուցվեն կամ հերքվեն որոշ գիտաբժշկական նախադրություններ: Արդյո՞ք այդ փորձերը դաժան չեն: Դուք դեռ իմ հե՞տ եք, պրոֆեսոր»:

Պրոֆեսորը բավականին վատ տեսք է ընդունում: Մուսուլման ուսանողը մոտենում է նրան և ջուր է տալիս, որ խմի:

«Պրոֆեսոր, խնդրում եմ տեսնեք ևս մի ակնհայտ հարց: Դուք գիտե՞ք, որ քննությունները փորձություններ են, որ տրվում են ուսանողներին քննվելու և հաջորդ ուսումնական տարի տեղափոխվելու համար»:

Պրոֆեսորը պարզապես շարժում է գլուխը:

«Ուսանողը պետք է գնա որոշ զոհաբերությունների և նույնիսկ ապրել տնից հեռու, որ ընդունվի համալսարան կամ քոլեջ: Նա պետք է իրեն զրկի բոլոր տան հարմարություններից, գերզբաղված է աշխատանքով, պետք է հրաժարվի իր ազատ ժամանակից ու քնից որպեսզի պատրաստվի քննություններին: Նա հանդիպում է ահավոր դժվարությունների քննական հարցերին պատասխանելիս և կաող է հարցաքննվել քննության ժամանակ նաև բանավոր: Պետք է անցնի այդ տանջող պրոցեսով, ինչպես նաև վճարել քննություն հանձնելու համար: Դուք չե՞ք համարում, որ այդ ամենը հիմք է դաժան համարելու համար: Արդյո՞ք պրոֆեսորը «լավ» մարդ է, որ ստիպում է ուսանողին տառապել հոգեպես և ֆիզիկապես»:

«Ես ձեզ չեմ հասկանում: Իհարկե համալսարանը և պրոֆեսորը ուսանողին օգուտ են տալիս՝ երբ ուսուցանելով որակավորում են նրան՝ իր ոլորտում: Միայն շատ անհեռատես մարդը կվիճեր այն պահանջով՝ որ ուսանողները քննություն տան առանց դժվարությունների ու զոհաբերությունների՝ որ պետք է գնան»:

Մուսուլման ուսանողը տխուր շարժում է քլուխը:

«Պրոֆեսոր, դա զարմանալի է, թե ինչպես դուք կարող եք հասկանալ թեստերի և քննությունների անհրաժեշտությունը, որ դուք պետք է դնեք, բայց չեք կարողանում հասկանալ նույն իմաստությունը՝ երբ աստված սահմանում է թեստերը և քննությունները իր արարածների համար: Օրինակ՝ ձեր եղբայրը: Եթե նա հաղթահարեր հիվանդության փորձությունը և մահանար

հավատքով, ապա այնպես պարբևատրված կլինէր դրախտային բերրիության մեջ իր կրած տառապանքների դիմաց, որ կուզէր տառապել հարյուր անգամ ավելին: Նրա պարզևի մեծությունը անհնար կլինէր չափել և նույնիսկ պատկերացնել: Ես ցավում եմ: Միայն շատ անհեռատես ու անբարտավան մարդիք են առարկում այն փորձություններին՝ որոնց ենթարկում է աստվածը իր ստեղծածներին, որ հետագայում ստանան անսպառ պարզև»:

«Դրախտ... Հա՛... Դուք տեսե՛լ եք դրախտը, լսե՛լ եք, շոշափե՛լ եք, հոտ քաշե՛լ եք, զգացե՛լ եք համր: Համաձայն փորձառարական կանոններին, գիտությունն ասում է, որ ձեր դրախտը գոյություն չունի»:

«Աստծո օգնությամբ մենք կհասնենք և այդ կետին: Եկեք շարունակենք: Ասեք, պրոֆեսոր, զգու՛մ եք նման բան՝ ինչպիսին է ջերմությունը»:

Պրոֆեսորը փոքր ինչ վերականգնվում է և այժմ նա ավելի վստահ է զգում իրեն:

«Այո, գոյություն ունի»:

«Եւ կա նման բան՝ ինչպիսին է սառնությունը»:

«Այո, երբեմն նույնիսկ չափից ավելի է լինում»:

«Ոչ, սեր: Ամեն ինչ լիովին այսպես չէ»:

Պրոֆեսորը ուղղակի նայում է չմասնակցելով: Ուսանողը պարզեցնում է:

«Ձեր մոտ կարող է լինի տաք, նույնիսկ շատ տաք, գերջերմություն և սպիտակ հալման մեզաջերմություն, իսկ հակադիր բևեռում լինի քիչ ջերմություն կամ ջերմության բացակայություն, սակայն մենք ոչինչ չենք կարող անվանել

«սառնություն»: Մենք կարող ենք հասնել 458 աստիճան գրոյից ցածր՝ ոչ մի ջերմություն, սակայն մենք չենք կարող գնալ ավելիին: Խիստ ասած՝ չկա նման հասկացություն՝ ինչպիսինն է սառնությունը: Այլապես մենք կկարողանայինք գնալ ավելի քան 458 աստիճանից ցած: Ջերմությունը կարող ենք չափել ջերմային միավորներով՝ քանի որ ջերմությունը էներգիա է: Սառնությունը դա ոչ թե ջերմության հակասությունն է, այլ պարզապես ջերմության բացակայությունն է»:

Լռություն. փսփսանք ինչ որ տեղ՝ սենյակում:

Մուսուլման ուսանողը շարունակում է:

«Կա՞ նման բան՝ ինչպիսինն է խավարը, պրոֆեսոր»:

«Այո»:

«Դուք սխալվում եք, սեր: Խավար գոյություն չունի: Դա լույսի բացակայությունն է: Կարելի է ունենալ նեղ լույս, նորմալ լույս, պայծառ լույս, տատանվող լույս: Եթե չկա չնդհատվող լույս, ապա քանակը ոչ մի վերաբերում չունի և կոչվում է խավար: Այդպես չէ՞: Այդ նշանակությունը օգտագործվում է խոսքի որոշման համար: Իրականում խավար գոյություն չունի: Եթե գոյություն ունենար, ապա կարելի կլիներ ունենալ ինչ որ ավելի մութ բան ստեղծելու հնարավորություն և պահել կոնտեյների մեջ: Դուք կարո՞ղ եք իմ համար մութ տարանում մթություն լցնել»:

«Ոչ»:

«Այ այդպես, պրոֆեսոր: Այն ինչ ես անում եմ մեկնարկում՝ դա ձեր փիլիսոփայության մեջ անբավարարություններ գտնելն է, որի արդյունքում դուք սխալ եզրակացություններ եք կազմում: Ձեր մոտ ոչ թե գիտություն է, այլ սուտ գիտություն»:

Պրոֆեսորը՝ զայրացած. «Միսա՛լ... Ինչպես եք համարձակվում...»

Մուսուլման ուսանողը շատ հանգիստ է, խոսում է մեղմ՝
ինչպես որ կխոսեր փոքր երեխայի հետ:

«Մեր, կարո՞ղ եմ բացատրել, թե ինչ ի նկատի ունեմ»:

Դասարանում ուսանողները անհամբերորեն շարժում են
գլուխները: Նրանք հետևում են իրենց ամբողջ ուշադրությամբ:
Պրոֆեսորը համաձայնվելուց բացի ուրիշ ընտրություն չունի:

«Բացատրել... Օ՛, բացատրել...»

Նա անտարբեր շարժում է ձեռքը և մեծ ջանքեր է օգտագործում
վերահսկողությունը վերականգնելու համար: Այնուհետև
անսպասելիորեն դառնում է բարեհամբյուր: Դասարանում ծանր
լռություն է տիրում:

«Դուք հենվում եք երկակիության վրա: Օրինակ՝ կա երկու
տեսակի կյանք և մահ, կա բարի աստված և չար աստված: Դուք
աստծո մասին հասկացողությունը առաջարկում եք որպես մի
օբյեկտ՝ որը կարելի է չափել: Մեր, գիտությունը չի կարող
բացատրի նույնիսկ թե ինչ է իմաստը: Այն օգտագործում է
էլեկտրականություն և մագնիսականություն, բայց ոչ ոք դրանք չի
տեսել, ավելին, որ չի էլ հասկացել: Պարզ օրինակ է ծառայում
մահվան հասկացությունը՝ որպես կյանքի հակադրություն,
այդպիսով մնալով անտեղյակության մեջ՝ այն մասին, որ մահը չի
կարող գոյություն ունենալ որպես հիմնական դեմք: Մահը դա ոչ
թե կյանքի հակադրությունն է, այլ բացակայությունը»:

Երիտասարդը մի թերթ է վերցնում այնտեղ նստած
ուսանողներից մեկից:

«Ահա Այս երկրի ամենալուսկալի բաներից մեկը, պրոֆեսոր:
Գոյություն ու՞նի այնպիսի բան՝ ինչպիսինն է անդուրությունը»:

«Իհարկե, գոյություն ունի: Հիմա կտեսնենք»:

«Միսալ է, սեր: Անդուրությունը դա գուտ դուրեկանության բացակայությունն է: Կա՞ նման բան՝ ինչպիսինն է անարդարությունը: Ոչ, սեր, անարդարությունը դա արդարության բացակայությունն է: Կա՞ նման բան՝ ինչպիսինն է չարիքը»:

Մուսուլման ուսանողը կանգ է առնում: Քիչ անց շարունակում է:

«Արդյոք դա բարու բացակայությունը չէ՞»:

Պրոֆեսորի դեմքը ձեռք է բերում տագնապալի գույն: Նա այնքան նյարդայնացած է, որ ժամանակավորապես կորցնում է խոսելու ունակությունը: Մուսուլման ուսանողը շարունակում է:

«Եթե կա չարիք այս աշխարհում, պրոֆեսոր, մենք համաձայն ենք որ կա, ապա աստված պետք է որ անում է իր կամքը՝ չարի տարածում: Այդ ի՞նչ կամք է, որ նա կատարում է: Ազնվական դուրանում ասվում է **«Ամեն ոգի կմահանա: Մենք փորձում ենք ձեզ բարիքով և չարիքով հանուն ողորմության և դուք մեզ կվերադարձվեք»** (դուրան 22:35):

Իսլամը թույլ է տալիս տեսնել, եթե մեզանից յուրաքանչյուրը ընտրի չարի դիմաց բարին: Ինչ վերաբերվում է ձեր հարցին՝ սատանայի մասին «Ո՞րտեղից եկավ սատանան» և որ աստված ստեղծեց սատանային, հարկ է նշել, որ սատանան որպես դեվ չի ծնվել, այլ դարձել է աստծո պատվիրանները կատարելուց հրաժարվելուց հետո և դարձել մարդու թշնամին: Աստված ասում է ազնվական դուրանի Մուրում(Իֆրահիմ, հատված 22) «Երբ Ալլահը կհրամայի՝ բերել նրա երկրպագուներին դրախտ, իսկ նրան չհնազանդվողներին տանջելով պատժել: Իբլիսը, (սատանան) կասի նրանց չհետևող անհավատին»: Իրոքից որ

Ալլահը խոստացավ ձեզ կիրակի և պարզևատրում ձեր կատարածների դիմաց և կատարեց իր խոստումը: Քանի որ անենագորի խոստումը ճշմարտություն է: Ես չունեի ձեր վրա ոչ մի իշխանություն, որ ստիպեցի ձեզ հետևել ինձ, բայց ես ձեզ շնջալով շփոթմունքի էի ենթարկում, իսկ դուք շտապեցիք հնազանդվել ինձ: Այդ պատճառով ի՛նձ մի դատապարտեք, այլ միայն ինքներդ ձեզ: Այսօր ես ձեզ չեմ ազատի պատժից և դուք էլ ինձ չեք փրկի դրանից: Այսօր ես հրաժարվում եմ նրանից, որ ինձ հնազանդվելով արել եք ինձ Ալլահի ուղեկից երկրային կյանքում, ինչպես ստրուկը իր տիրոջը: Իսկապես որ, անհավատներին կհասնի տանջալի պատիժը:

Պրոֆետորը սկսում է իր սիրած խոսքերը:

«Փիլիսոփայության դասերին ես ընդունում եմ այս խնդիրը որպես ազատ ընտրության հետ կապ չունեցողի: Որպես ռեալիստ, ես բացարձակապես չեմ ընդունում աստծո կամ ինչ որ այլ նախադրյալի համակցությունը հիմնավորվելով իմ հավասարմանը՝ որտեղ աստվածը (հենց որպես աշխարհի մաս) չկա»:

«Ես էլ կմտածեի, որ աստծո բարոյական օրենսգրքի հոգեբանական պակասը ամենահաճախ հետևվող երևույթներից մեկն է»:

Պատասխանում է մուսուլման ուսանողը:

«Թերթերը աշխատում են միլիոնավոր դոլարներ, տեղեկացնելով այդ մասին, պրոֆետոր: Դուք փորձում եք աշխարհի ամբողջ չարիքի մեղքը բարձել աստծո ուսերին: Աստծուն՝ որին դուք չեք հավատում: Ինչը, համաձայնեք որ ակնհայտ հակասություն է: Բայց եկեք պարզենք, թե ով է իրականում պատասխանատու չարիքի տարածման համար՝ նրանք որ չեն հավատում աստծուն կամ նրանք՝ ովքեր ունեն

հիմնական համոզմունք որ մուսուլմանը պետք է պատասխանատու լինի իր արարքների համար այս աշխարհում և որ նա պետք է հարություն առնի դատաստանի օրը: Արած բարիքի համար կպարգևատրվի, իսկ կատարած բոլոր չարիքների համար կենթարկվի պատասխանատվության: Յուրաքանչյուր մուսուլման պարտավոր է հավատալ, որ ինքն է պատասխանատու իր գործողությունների համար և դատաստանի օրը ուրիշ ոչ ոք իր փոխարեն չի կրելու պատասխանատվություն: Դրախտ գնալու վճիռը պետք է պարզ լինի բոլոր հավատացյալների համար, այնժամ երբ դժողքը կլինի անհավատների կացարանը: Համարվում է հիմնական հավատքի հիմք նաև համոզմունքը, որ նույնիսկ մուսուլման հանցագործները կպատժվեն իրենց հանցանքների դիմաց: Պրոֆետր, այդ հասկացությունները կանխեցին անհամար միլիոնավոր մուսուլմանների հանցանք գործելը: Բոլորս գիտենք, որ պատիժը ուժեղ և համոզիչ պայման է հանցանք կանխարգելու համար: Առանց այդ հայեցակարգի մենք չէինք կարողանա իրագործել մեր աշխարհիկ գործերը՝ տույժեր և տուգանքներ: Ազատագրվեմա՞ր պատիժը ցանկացած քաղաքակիրթ համակարգի համար անբաժանելի մաս է: Մյուս կողմից մենք ունենք աթեիզմի լուսավորիչներ՝ որոնք, նշված բարոյական հարցի հետ կապված, չեն հավատում են այդ հասկացություններին: Նրանց համար չկա պատասխանատվություն, պարզ և ոչ էլ դատաստանի օրվա պատիժը: Նրանք պարզ և հստակ ասում են մարդկային զանգվածներին, որ եթե կարող են կանխել դա, ապա անահնգստանալու կարիք չունեն: հետո էլ հայտարարում են, որ հետևաբար չկա «մեղք» հասկացություն: Մեր մոտ դա նշվում է որպես աստծու կամքին դեմ գնալ՝ այն որ ասում են, թե յուրաքանչյուր ոք ազատ է անելու ինչ ուզում է և ոչ մի գործողություն չի որակվի որպես «մեղք»: Թույլ տվեք ասել

այսպես: Աթեիզմի լուսավորիչները պնդում են, որ, քանի որ աստված գոյություն չունի, ապա չեն կարող ընդունվել որևէ կանոններ այն մասին՝ թե ինչն է ճիշտ և ինչը սխալ: Այսպիսով չկա «մեղք», չկա աստված, հետևաբար չկա «աստծո կամքին դեմ գնալ»: Մարդը ազատ է կատարել իր ընտրությունը, իր կանոնները և իր սեփական բարոյական կողեկար: Այսպիսով տղամարդիք ամուսնանում են տղամարդկանց հետ, կանայք՝ կանանց, տարածվում է ՁԻԱՀ-ը և այլ հիվանդություններ: Չկա ոչ մի մեղք, դավաճանություն և ապօրինի կենակցություն, եթե ամեն ինչ կատարվում է համաձայն այդ տգեղ համաձայնությանը: Աթեիստների տրամաբանությունը նույնիսկ արյունապղծությունը չի համարում մեղք, եթե կողմերը չափահաս են, սակայն արյունապղծությունը մեղք է կրոնի տեսակետից: Էթիկայի օրենսգիրքը կրոնի հիմքն է՝ այնժամ երբ պրոֆեսորը կտրականապես հայտարարում է, որ բացարձակապես չի ընդունում աստված հասկացությունը կամ որևէ այլ աստվածաբանական գործոն որպես համաշխարհային կարգուկանոնի մաս: Նորածնի սպանությունը մոր արգանդում թույլատրվում է՝ քանի որ պաշտպանվում են կանանց իրավունքները և այլն: Աթեիստների կողմից ընդունված սոցիալական «կանոնների» և սուտ գիտնալանների լուսավորչությունների ցուցակը կարելի է շարունակել անվերջ: Անազնիվ ինտելեկտուալները փորձում են բարձել մեղքերի տարածման ողջ պատասխանատվությունը աստծո ուսերին:

Եկեք քննարկենք գիտական մոտեցմամբ ձեր հարցը, պրոֆեսոր: Վերցնենք մի խումբ աստծուց վախեցող մարդկանց՝ ովքեր հավատում են որ աստված գոյություն ունի և վերցնենք մի խումբ՝ որոնք աթեիստական տեսանկյան կողմնակիցներն են: Գնահատեք օբյեկտիվորեն՝ թե ով է տարածում չարիքը: Յուրաքանչյուր օբյեկտիվ դիտորդ ամնիջապես նկատում է, որ աստծուց վախեցողների խումբը՝ որ հետևում է աստծո

օրենքներին, իրականում տարածում է բարին, իսկ նրանք՝ ովքեր կազմում են իրենց սեփական հարաբերության բարոյական կանոնները, փաստորեն, հանդիսանում են աշխարհի չարի տարածողներ»:

Մուսուլման ուսանողը կանգ է առնում: Այս կարևոր նկատառումներից հետո ուսանողների աչքերը վառվում են, քանի որ նրանք ընկալում են այս հարցերը ավելի պարզ լույսի ներքո: Ոչ ոք երբեք չէր խոսացել նրանց հետ նման կարևոր դաստիարակչական հարցերի շուրջ:

«Պրոֆեսոր, ես զարմանում եմ ձեր ոչ գիտական մոտեցմանը բարոյական հարցի նկատմամբ: Ես զարմացած եմ, որ նոյնիսկ դուք համարում եք, որ կապիկից ծագած մարդը իրեն կենդանու պես չի պահում: Ես չեի սպասում, որ աթեիզմի հետևորդները ընկնում են այդպիսի ակնհայտ հակասության մեջ»:

Դասարանը թնդում է ծափահարությունների ներքո:

«Մենք արդեն քննարկել ենք գիտությունների զարգացման թեման: Դուք երբևէ նկատե՞լ եք Էվոլուցիա ձեր սեփական աջքերով, սեր»:

Պրոֆեսորը կոճտացնում է ատամները և անշարժ հայացքով, լուռ նայում ուսանողին:

«Պրոֆեսոր, քանի որ ոչ ոք երբևէ չի դիտարկել Էվոլուցիայի գործնթացը՝ գործողությունների ներքո և ոչ ոք չի կարող ապացուցել, որ այդ գործնթացը կրում է շարունակական բնույթ. Դուք ուսուցանում եք այդ վարդապետությունը՝ մի վարդապետություն որում անցքերը այնքան շատ են, որ ասես թե ցանց լինի, և ունի ավելի ցածր արժեք ցանկացած աստվածաբանական վարդապետությունից: Դա սուտ

գիտություն է, այլ ոչ թե գիտություն, իսկ նրա կողմանիցները՝
անհարգալից լուսավորիչներ»:

Պրոֆեսորի երեսը կնճռոտվում է:

«Օ՛... ինչ հանդգնություն...»

Նա քայլելով չափում է լսարանը, փորձելով վերականգնել
ինքնավերահսկողությունը:

«Մեր փիլիսոփայական քննարկումներում ես կանտեսեմ ձեր
հանդգնությունը, տղա ջան: Քույր դրանով ավարտեցի՞ք»:

Պրոֆեսորի խոսելը նման է թորթոջունի:

«Մեր, դուք համաձայն չե՞ք աստծո բարոյական
օրենսդրությանը՝ անել այն՝ ինչ ճշմարիտ է»:

«Ես միայն գիտությանն եմ հավատում»:

«Մեր, պետք է ներողություն խնդրեմ այնինչից՝ որ հավատում
եք, սակայն դա ոչ թե գիտություն է, այլ սուտ գիտություն՝ իր
բոլոր խնդիրներով և թերություններով»:

«Սուտ գիտություն՞ն... խնդիրնե՞ր»:

Պրոֆեսորը սարսափելի տեսք ունի: Դասարանում
հասունանում է սկանդալը: Մուսուլման ուսանողը կանգնած է,
ժպիտով՝ երեսին, սառնարյուն և հանգիստ:

Երբ աղմուկը դադարում է նա շարունակում է:

«Ինչպես տեսնում եք, պրոֆեսոր, ճշմարիտ գիտությունը պետք
է բացի օրենքները՝ որոնց սահմանել է տիեզերքիստեղծողը:
Սակայն աթեիստական կրոնը փորձում է դիմակայել այդ
հայցակարգին, հենվելով վիճակագրության շահարկված
կեղծիքներին, թերի ճշմարտություններին և
մոնիպուլացիաներին: Ճշմարտությունը պետք է հաղթի:

Ճշմարտությունն այն է, որ ամեն տրամաբանություն իմաստ ունի՝ երբ գոյություն ունի միայն մի աստված՝ ով ստեղծել է տիեզերքը: Նա ստեղծել է մի ամբողջ համակարգ՝ որում տիեզերքը անսահման էր անհիշելի ժամանակներից: Եկեք վերադառնանք իմ քիչ առաջ հնարկվող թեմային՝ որում ես ասացի, որ ավելի ուշ կբերեմ մի օրինակ՝ որին կարող է վստահել ամեն ոք: Կա՞ որևէ մեկը դասարամում, որ տեսել է օդ, մոլեկուլ, թթվածին, ատոմ, պրոֆեսորի ուղեղը»:

Հնչեց ծիծաղ:

«Արդյոք կա՞ մեկը այստեղ՝ ով երբևէ լսել է պրոֆեսորի ուղեղը, զգացել կամ համտեսել է այն»:

Բոլորը լռում են: Մուսուլման ուսանողը տխուր ցնցում է գլուխը:

«Երևում է ոչ ոք այստեղ չունի պրոֆեսորի ուղեղը ընկալելու զգայարան: Համաձայն պրոֆեսորի նշած կանոնների՝ այսինքն համաձայն փորձառարական սուտ գիտությանը, պարզ ապացույցով հայտարարում եմ, որ պրոֆեսորը ուղեղ չունի»:

Պրոֆեսորը ցած է ընկնում: Դասարանը կրկին պայթում է ծափահարություններով: Ուսանողը գալիս է պրոֆեսորի մոտ և ջուր է տալիս նրան: Որոշ ժամանակ անց պրոֆեսորի ինքնազգացողությունը բարելավվում է: Նա նայում է ուսանողին:

«Ձեր վիրավորանքները ոչ մի կերպով չեն ապացուցում աստծո գոյությունը»:

Մուսուլման ուսանողը պատասխանում է:

«Պրոֆեսոր, ես շատ եմ զարմացած: Մտածում էի, որ դուք ընդունում եք ձեր պարտությունը: Բայց երևի դուք մոզախիստ եք»:

Ուսանողը ընդմիջում է և շատ մտահոգ նայում դասարանին, իսկ այնուհետև պրոֆեսորին: Ծանր հոգոցով կրկին դիմում է պրոֆեսորին:

«Մեր, դուք ծնողներ ունե՞ք՝ հայր ու մայր»:

«Եւս մի հիմար հարց... Իհարկե, մենք բոլորս էլ ծնողներ ունենք»:

«Համբերատար եղեք, սեր: Դուք համոզվա՞ծ եք, որ ձեր հայրը՝ ձեր հայրն է, իսկ ձեր մայրը՝ ձեր մայրն է»:

Պրոֆեսորը ափերից դուրս է գալիս:

«Ինչ անմտություն: Իհարկե, իմ մայրը՝ իմ մայրն և իմ հայրը՝ իմ հայրն է»:

Նա պարզապես գոռում է:

Մուսուլմանը ընդմիջում է անում: Դադարը ձգձգվում է: Դասարանում անսպասելի լարված մթնոլորտ է ստեղծվում: Ուսանողները դժվարությամբ են գսպում իրենց: Հանգիստ ու հաստատուն ձայնով, մահմեդականը ասում է:

«Ապացուցեք ինձ դա»:

Դասարանում մթնոլորտը լարվում է մինչև սահմանները: Պրոֆեսորը արդեն ի վիճակի չի վերահսկել իրեն: Նրա դեմքը մանուշակագույն երանգ է ստանում:

«Ինչպե՛ս եք համարձակվում»:

Նա ափերից դուրս գալով, գոռում է ավելի բարձր:

«Ես բավականին տարա ձեր վիրավորանքները: Դու՛րս իմ դասից: Ես կզեկուցեմ ձեր մասին ռեկտորին»:

Այդպիսի պայթյունի չսպասող դասարանը նստած է քարացածի պես: Արդյոք պրոֆեսորը ինսուլտ կամ սրտի կաթված չստացա՞վ:

Մուսուլման ուսանողը հանգստությամբ կանգնած է իր տեղում: Շրջվելով դեպի դասարանը բարձրացնում է ձեռքերը, վստահեցնելով նրանց, որ անհանգստանալու ոչինչ չկա: Հետո նայում է պրոֆեսորին կարեկցական հայացքով: Ինչ որ ուժ է ելնում նրա աչքերից՝ որ ուղղված են դեպի պրոֆեսորը: Պրոֆեսորը չի կարողանում դիմակայել հայացքին և իջեցնում է գլուխը: Նրա զայրույթը աստիճանաբար թուլանում է: Նա ընկնում է բազկաթոռին և ձեռքերով բռնում գլուխը:

Որոշ ժամանակ անց մուսուլման ուսանողը խոսում է շատ մեղմ:

«Հարգելի պրոֆեսոր, ես ի նկատի չունեի, որ ձեր ծնողները՝ ձեր ծնողները չեն: Այն ամենը, որ ես փորձում եմ ապացուցել դա այն է, որ ոչ դուք, ոչ ես, ոչ էլ մեզանից որևէ մեկը այս դասարանում չի կարող լիովին վստահությամբ պնդել, որ մեր ծնողները դա մեր ծնողներն են»:

Դասարանը լռում է:

«Բանն այն է, որ մենք ներկա չեինք մեր ծնողների սեռական հարաբերության կատարման ժամանակ: Մենք չունենք պատկերացում՝ թե ինչպես տեղադրվեց սերմը մեր մոր արգանդում: Մեր ծնողներին ընդունում ենք խոսքով՝ որ նրանք մեր ծնողներն են: Համարում ենք, որ մեր ծնողները ազնիվ և ճշմարիտ են այս հարցում: Մենք չենք կասկածում նրանց անկեղծությանը... Նույն կերպ ձեր երեխաները կնդունեն ձեր խոսքերը՝ որ դուք իրենց հայրն եք և նրանց մայրն էլ՝ նրանց մայրը: Այդպես չէ՞, պրոֆեսոր»:

Պրոֆեսորը բարձրացնում է գլուխը և նայում մուսուլման ուսանողներին: Նրա դեմքը հանկարծակիորեն բացվում է, նրանում երևում է ընկալումը... Չայրույթը գնում է: Շատ դանդաղորեն նա կրկնում է:

«Մենք հավատում ենք մեր ծնողների խոսքերին... ընդունում ենք մեր ծնողների խոսքերը...»

«Այո, պրոֆեսոր: Կան շատ բաներ՝ որոնցում պետք է հավատանք ուրիշների խոսքերին՝ օդի առկայությունը, թթվածին, մուլեկուլներ, ատոմներ և այլն: Այսպիսով, երբ խոսքը վերաբերվում է վերացական հարցերին, մեր իրական հետազոտություններից գիտենք, որ չկար այնպիսի մարդ՝ որ գոյություն ուներ, ավելի ազնիվ ու հուսալի քան նրանք՝ ովքեր կոչվում են աստծո սուրհանդակներ: Մենք՝ մուսուլմաններս պատրաստ ենք զոհաբերել մեր կյանքը հանուն նրան՝ որ Մուհամմեդը (հանգստություն և Ալլահի օրհնանքը լինի հոգուն) չխաբի ոչ մեկին և լինի բացարձակապես անսխալ: Նրա ազնվությունը այնպիսին էր, որ նույնիսկ երդյալ թշնամիները անվանում էին նրան «Ալ-Ամին» (ճշմարիտ): Մենք պատրաստ ենք հավատալ մեր ծնողների խոսքերին՝ որ նրանք են մեր ծնողները: Այդ պատճառով ամենայն անկեղծությամբ ու ազնվությամբ պետք է ընդունենք բոլոր խոսքերը հավատքով այնպես՝ ինչպես պետք է ընդունենք շատ ուրիշ բաներ՝ դրախտի և դժողքի գոյությունը, հրեշտակների գոյությունը, վճռի օրը, աստծուն հաշիվ տալը մեր աշխարհիկ գործերի համար և բազմաթիվ այլ հասկացություններ՝ որոնք ասված են սուրբ դուրանում: Եթե մարդը պատրաստ չի հավատալ Ալլահի այդ սուրհանդակին (հանգստություն և Ալլահի օրհնանքը նրա հոգուն), ապա դա պարզ կեղծավորություն է՝ երբ նա ընդունում է գիտնականների խոսքը՝ որոնց կարծիքները շարունակվում են փոխվել երբ նույնիսկ հավատում են ծնողների խոսքերին:

Դատելով օրենքների քանակից և դատական գործնթացներից՝ որ լինում են ամեն տարի մեր դատարաններում՝ որտեղ ծնողները առարկում են նրանց հետնորդների լույս տեսնելը, ինչպես նաև հաշվի առնելով դոնորների բեղմնավորումով ծնված երեխաներին՝ որ օտարի են, ինչպես նաև անհամար որդեգրված երեխաների գոյության փաստը: Վիճակագրորեն միշտ կա մեծ կասկածանքի տեղ ամեն մարդու՝ իր ծնողների զավակը լինելու, պնդման մեջ»:

Դիմելով դասարանին մուսուլման ուսանողը ավարտում է:

«Դա յուրաքանչյուր անձի պարտականությունն է՝ իմանալ իսլամի մասին ավելին: Ազնվական դուրանը կա բոլորի համար՝ ով ցանկանում է սովորել: Իսլամի մասին շատ բաներ կան գրված: Իմ պարտքն է ձեզ ասել, որ իսլամը ճշմարտություն է: Սուրբ դուրանը ասում է « Կրոնի մեջ ուղիղ ճանապարհը արդեն տարբերվեց շփոթմունքից: Ով չի հավատում իդոլներին և հավատում է Ալլահին՝ նա բռնվել է ամենահուսալի բռնակից՝ որը երբեք չի կոտրվում: Ալլահ՝ լսած, իմացած» (դուրան 2:255):

Իմ պարտքն էմ համարում նաև ձեզ հրավիրել մուսուլմանների եղբայրություն և իսլամ ընդունել: Ալլահը պաշտպանն ու պահապանն է նրանց՝ ովքեր հավատում են: Նա խավարից լույսի է բերում: Ինչ վերաբերվում է նրանց՝ ովքեր չեն հավատում՝ նրանց խնամակալները՝ կեղծ աստվածները լույսից խավար են տանում: Դա սուրբ դուրանի բանաստեղծություններն են՝ ամենագորի խոսքերը՝ որ ես ասացի»:

Մուսուլման ուսանողը նայում է ժամացույցին և ասում:

«Պրոֆեսոր և ուսանողներ, ես շնորհակալ եմ, որ ինձ հնարավորություն տվեցիք բացատրել այդ հարցերը: Կներեք, բայց ստիպված եմ գնալ մզկիթ աղոթելու համար: Խաղաղություն նրանց՝ ովքեր հետևում են ուղիղ ճանապատհին»:

Իսլամի հետագա կարդացման համար և աթեիզմի
ամբողջական փլուզման համար խնդրում ենք այցելել հետևյալ
ինտերնետային հասցեներով:

<http://www.sultan.org/>
www.islamic-message.net
www.islamic-invitation.com
www.islamgalaxy.com